Բայց ես կարո՞ղ էի ներել նրանց, որ այնպէս անվայելուչ կերպով խօսում էին Մարօի մասին...: Այսպիսի խառն մտածմունքներով լցուած էր իմ յիմար գլուխը, երբ ես կրկին դարձայ տաղաւարի մօտ եւ պառկեցի նրանցից փոքր-ինչ հեռու խոտերի վրայ:

Ետ ընկած լուսինը կամաց-կամաց վեր բարձրացաւ սարի ետեւից եւ լեռները լցուեցան արծաթի լուսով: Գեղեցիկ տեսարանը ամենեւին չազդեց իմ վրայ: Իմ գլուխը դեռ լիքն էր սեւ մտածմունքներով. իմ սիրտը դեռ անհանգիստ խռովութեան մէջ էր: Չգիտեմ, ինչո՞ւ այնպէս վրդովուած էի ես. չգիտեմ ի՞նչ էր, որ այնպէս տանջում էր ինձ: Միայն այսքան եմ յիշում, որ շուտով իմ աչքերը լցուեցան ջերմ արտասուքով, ես սկսեցի լաց լինել, երկա՛ր լաց լինել...

Գիշերն ես անցուցի տենդային ջերմութեան մէջ: Առաւօտեան լուսաբացի պահուն ինձ տիրեց մի թմրութիւն. այն ժամանակ եւս խառն երազները սկսեցին անհանգիստ անել: Ողորմա՛ծ աստուած, ինչե՞ր չէին գնում եւ գալիս իմ աչքերի առջեւ, — սատանաներ, հրեշտակներ, դժոխք, արքայութիւն, — մի խօսքով, հարիւրաւոր տխուր եւ ուրախալի պատմութիւններ, մինը միւսից յետոյ կամ զուարճացնում էին ինձ եւ կամ սարսափեցնում...: Բայց երբ զարթեցայ, բոլորը մոռացայ, մի երազ միայն մնացել էր իմ մտքում, նրան յիշում եմ եւ այսօր:

Ինձ երեւում էր, թէ Սօլայի հեղեղատը յորդացել էր, որպէս ամէն տարի, գարնան ժամանակ բարձրանում էին նրա ջրերը: Իսկ այժմ շատ էր բազմացել ջուրը, խիստ շատ: Կատաղած գետը գոռում էր, փրփրում էր, եւ հսկայական վիշապի նման սարսափելի պտոյտներ էր գործում: Նրա պղտոր յորձանքները տանում էին իրանց հետ ամէնը, ինչ որ հանդիպում էր: Ես տեսնում էի՝ թէ ինչպէ՛ս ալիքների մէջ լող էին տալիս տնային կարասիք, տեսնում էի խեղդուած մարդերի դիակներ, այլեւ երեխաները, կապած օրօրոցների մէջ... Մտածում էի՝ որքա՞ն տներ պէտք է քանդած լինի, որքա՞ն ընտանիքներ պէտք է ոչնչացած լինի սարսափելի հեղեղատը... Անբախտ զոհերն երբեմն բարձրանում էին ալիքների հետ, երբեմն կորչում էին նրա պտոյտների մէջ. երբեմն մօտենում էին գետի եզերքին. — ձեռքդ մեկնէի՛ր եւ ահա՝ կ'ազատես, մտածում էի ես:

Ես տեսնում էի՝ Կարօյին, Ասլանին եւ Սագօյին, նրանք այնպէս փոքրիկներ էին, որպէս առաջ, երբ դեռ երեխայ էին, երբ հեղեղատի ջուրը նստելու ժամանակը գնում էինք միասին նրա ափերից հաւաքում էինք զանազան հնութիւններ, որոնց նա բերել էր իր հետ, քանդելով Քօհնա-Շհարի աւերակները: Իսկ այն երազ չէր: